

ման, Տեա Պատմութիւն Մասթէոսի Ուռ-
հայեցւոյ, 1869, Երուսաղէմ, էջ 526:

4. — էջ 283, Թիւ 232, Թուականը
97 (1255) սխալ է. ուղղելի է 97 = 1341:
Յիշեալ Շարականոցը գրուած է ճի հայրա-
պետութեան տեառն աէր Մխիթարայ և
Թաղաւորութեան Լեւոնի բարեպաշտի»,
Արդարեւ 97 = 1341 թուին, կաթողիկո-
սական աթոռին վրայ էր Մխիթար (1341-
1355) և Թաղաւորական իշխանութիւնը
կը վարէր Լեւոն (1320-1342):

5. — էջ 405, առդ վարէն երրորդ,
«Թողուլ զաղանդնս Աբելի ի միանձինս
ժողովողին»: Պէտք է կարդալ՝ Թողուլ զա-
ղանդն Սաբելի ի մի անձինս ժողովողին:
Սաբել Լիբէացի երրորդ գարու յայտնի
աղանդաւոր մըն է: Ան կ'ուրանար Սուրբ
Երրորդութիւնը և կ'ըսէր թէ Հայր,
Որդի, Հոգի, նոյն անձին երեք տարբեր
դէմքերը կամ կերպարանքներն են:

6. — էջ 505, առդ վարէն 4. Ասս
[առաղանիշով] ի բազում գիրս անդ գըր-
եալ: Հարկ է կարդալ՝ Առի բազում
գիրս անդ գրեալ:

7. — էջ 558, Բ. Ժածկագիր.

Բ, Ճ, Հ, Գ, Կ,

Վ, Մ, Է, Ջ, Լ, Յ,

Կ, Ս, Մ, Շ, Ո, Է:

Գանի մը տարի առաջ փորձած էինք
վերծանել Նոր Զուգայի Թիւ 34 ձեռագրին
մէջ գտնուող վերագրեալ Ժածկագիրը, և
տուած էր հետեւեալ ընթերցումը, ըստ
վերի կարգին.

Յակոբ,

Գրիգոր,

Կորիւն:

Տեա Սիոն, 1979, էջ 263 (12):

Հայերէն ձեռագիրներու յիշատակա-
րաններուն պատմական շղթային պակասող
այս լրացուցիչ և կարեւոր օղակին հրա-
պարակումը ապահով ենք որ բարձրօրէն
պիտի գնահատուի բոլոր բանասէրներու
և հայագէտներու կողմէ:

Ն. ԱՐԳ. ԾՈՎԱԿԱՆ



«ՄՆԵԴԱՎԱՅՐ ԿՈՐՈՒՍԵԱԼ»

Հեղինակ՝ ԵԴՈՒՄԱՐ ՊՅՍԱՅԱՆ

Պէյրուք, 1984, էջ 74

Եւ

«Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ»

Հեղինակ՝ ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

Պէյրուք, 1982, էջ 62

Երկու վտիտ քերթողագրքեր. լոյս
տեսած Միջին Արեւելքի հայ գրական —
գէթ մինչև վերջերս — ամենէն բեղուն
փեթակէն, (ուրախ ենք որ, հակառակ
տասնամիակէ մը աւելի տեղող հրազէննե-
րու համերգին, չէ դադարած Հայ Դպրու-
թեան սպասը մեր դրացի դժբախտ երկրին
մէջ.) գրուած՝ անուն ու համարս չիմած
հեղինակներու կողմէ — առաջինը, այժմ
ոչ այլևս այս աշխարհի բնակիչ, կարելի
արժանաւորութեամբ —, զոր ստացանք
վերջերս, չարք մը մեծափոր հատորներու
կարգին, որոնցմով սակայն չ'արժեր գրա-
դիլ, մեր քերթողական հարուստ ժառան-
գութեան վրայ աւելցնելիք ոչինչ ունե-
նալուն համար և որոնց յարգի բլրա-
դէզերուն տակ տնկարելի եղաւ մեզ գտնել
ցորենի դէթ քանի մը առողջ հասկեր:

Ըսինք թէ առաջինը կը կենայ այլևս
վարագոյրի ետին: Ունէր աղանդ, կու-
գար շէպէլ Մուսայէն, որու հողին համ-
ու բոյրը ա'յնքան հաջողատօրէն հասած
են մեզի իր հայրենակիցներու ու բախ-
տակիցներու գրչով: Պայանեան ալ անյադ
կարօտով կ'երգէ իր մանկութեան հետ
շողունած իր ճշնագրավայր կորուսեալը,
բայց, ինչպէս նախորդանին մէջ հրատա-
րակելը կ'ըսէ, հեղինակին կանխահաւ ժա-
նով ընդհատուած, աւարտուն գործ մը չէ
ան: Ուրիշ խօսքով, հեղինակը առիթը
չէ ունեցած զայն զգրական արդուկձե-
նացընելու, ինչպէս կ'ըսեն, դնելու անոր
էջերուն վրայ: անվիճելի իր ազգանդին
դրոշմն ու կնիքը:

Պիթիաս, Հապիթ, Եօզուն Օլուք,
Խաբըր Պէլ, Գէպուսիէ ժապաւէնի նման
կը տողանցեն գրքին էջերէն, իւրաքան-
չիւրը իր մարդերու և բնանկարներու
յատեանշական կողմերով: Ունի նաեւ ինք-

նահանար բառեր, ինչպէս՝ զազարահասակ, ցրտաբնազդ, ծայրամուկ, բարեպատոււմ, բազմաթոյն, ժպտածոյն և այլն:

Լոյս առանձն իր ձևին մէջ իսկ, այս գրքոյնը բան մը կ'աւելցնէ տարաբախտ գրագէտին — իր համարուել պարտական է աւելի իր արձակ գործերուն — ժառանգութեան վրայ: Ո՞ր քերթողը, իր յաջողագոյն կտորներու կողքին, չէ ստորագրած միջակ (կամ նոյնիսկ անկէ վար) յաջողուած քով կտորներ: Թէքէեան իսկ բացառութիւն չի կազմիր այս մարդին մէջ:

Աւելորդ չըլլայ ըսել թերևս, թէ հանգուցեալ հեղինակը հիմնադիրներէն ու խմբագիրներէն մէկը եղած է Պէյրութի ամենէն բարձրարժէք գրական հանդէսին՝ «Բազին»-ի:

Նոյնը չենք կրնար ըսել դժբախտաբար երկրորդին, որ նոյնքան երախտաբան աշխատանք տարած է տարիներով «Շիրակ» ամսագրի մէջ և հզած է արգիւնաւոր կրթական մշակ:

Գիրքը լեցնող 50 հնչեակները, հոգեվերլուծական հէնքի վրայ բանուած — լպծռած գետին մը, ուր վաւերական տաղանդներ իսկ չեն կրցած մնալ անսայթաք — շարայարութիւն մըն են տարտամ, խռափուկ պատկերներու ու զգացումներու, որոնք կը միտին երբեմն մինչև անաստուածութիւն:

Վերջին տասնամակին Լիբանանը ալեկոծող եղբարկան դէպքերն են հաւանաբար տուն տուողը իր ներշնչումներուն:

Չենք կրնար անտեսել կիսայաջող (տանկի) սողերու — և երբեմն տուններու քայքայ լճման կտորի մը — գոյութիւնը: Բանանք, պատահաբար, 18րդ էջը, և արագորենք անկէ հետեւալը. —

Գաւթնա մուցեք եմ ընդմիտս ես գիս, կեանքն ու նաեւ քեզ,
Վոխարհն այս մեծ, ցամաքներն ու ծովն ու լեռն ոսկիսաբ,
Երեկն ամբողջ ու ներկան, վաղուան հաւատսն ալ կարծես,
Ու վերածուեք եմ կոտորած սրիցի մը անբարբառ:
Ձի այն տեսն պիտի լոկ գիտես քե դուն դարեկ դար

Մեզ խաբեցիր միմիայն խոստումներով բարձրագ, եւ չուզեցիր որ կեանքն այս խաղաղութեան երգ ըլլար:

Առինք 2րդ և 4րդ տունները միայն:

Ինքզինք մոռցած մարդը բնական է որ մոռնայ ամէն բան: Միւս երեք տողերը — և նոյնիսկ առաջինին երկրորդ կէսը — կրկնութիւն են և ուստի տնայեալ աւելորդք: Հապա ճոռկեալօրքը:

Երրորդ տունին մէջ կայ «վերջնապէս» բառը, որ «վերջնականապէս»-ին կրճատեալ ձևն է: Լաւ կ'ըլլայ որ մեր քերթողները հեռու մնան տգեղ այս բառէն:

Վերջին տունին մէջ «խոստումներով» և «բարձրագէտ» բառերը քով քովի կը կենան: Նիւթական դեղը և աննիւթական խոստումը ինչպէս կրնան լեզու գտնել իրարու հետ:

Կ'երևի թէ Լևոն Վարդանի համար շնջուած են սամամները կարելիին և անկարելիին:

Արփակեղ, արեւկայ, հեւք — ամենէն շատ չարչարուած բառերէն մին սփիւռքի մեր քերթողներուն կողմէ — բառերը գրքին մէջ գործածուած են յաճախակի և անտեղի կերպով:

Յանգարանութեան մէջ անթերի են Լ. Վարդանի հնչեակները: Բայց յաճախ այնքան անճարակ ընտրութեամբ կոչուած են բառերը յանդ կաղմելու, որ բնականաբար կը զգաս թէ բացի բանաբոսիկ իրենց դերէն, ոչ մէկ իրաւունք ունին անոնք երեւելու հոն:

Ջարմանք պատճառեց մեզ գրքի վերջաւորութեան երեցող ցանկը քերթուածներու առաջին սողերուն, այբբենական կարգով: Չենք գիտեր թէ ինչի՞ կը ծառայէ ան, իր նախընթացը չունի այս երևոյթը:

Լևոն Վարդանի նախորդ գործերը մեզ կ'ընեն աւելի խաղաղահամայն իր նկատմամբ ու մեր անկախութեան մէջ աւելի յուսախաբ՝ իր այս գործին դիմաց:

Գ. ՃԱՐՏԱՐ